

А. Дж. КИРАКОСЯН, Великобритания и Армянский вопрос. 90-е годы XIX века. Ервзан, изд. «Айастан», 1990, 238 с.
 Ա. Զ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը, XIX դ. 90-ական թվականներ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1990, 238 էջ:

Գրախոսվող աշխատությունն ամենից առաջ աչքի է ընկնում հեղինակի օգտագործած ուղիտական շրջանառության մեջ գրած արխիվային նյութերի, հրապարակված դիվանագիտական փաստաթղթերի և մասնագիտական դրականության լայն ընդգրկումով: Հայկական հարցի, նրա պատմական զարգացման ընթացքի մասին մոտ մեկ տասնյակ լեզուներով ստեղծվել է սկզբածավալ գրականություն, սակայն ոչ մի լուրջ պատմաբան չի կարող պնդել, թե այդ հարցի գիտական լուսաբանումն արդեն իսկ ամբողջացված է, իսկ աղբյուրները՝ սպառված, և ամ որ Հայկական հարցն այսօր այժմեական չէ, քանի որ այն վերջնականորեն լուծվել է խորհրդային իշխանության շնորհիվ, ինչպես դա մոտիկ անցյալում փորձում էին ներկայացնել հայրենի որոշ պատմաբաններ:

Ա. Կիրակոսյանն իր գրքով դալիս է հաստատելու Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը նոր կամ «մոտացված» աղբյուրների հիման վրա նորովի հետազոտելու անհրաժեշտությունը՝ վեր հանելու համար հարցին խառնված բոլոր պետությունների (Քուրդիա, Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ավստրո-Հունգարիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ) իրական դերն ու պատասխանատվության լային այդ խնդրում: Մի խնդիր, որը թերևս կպահանջի հայ ժողովրդի, Քուրդիայի և Եվրոպայի նորդարյա դիվանագիտության պատմության մասնագետների համատեղ ջանքեր և նպատակասլաց աշխատանք:

Գրախոսվող գրքում քննական վերլուծության նյութ են դարձել առաջին հերթին և զխավորապես անգլիական փաստաթղթերը, մամուլն ու դրականությունը՝ բնագրից քաղված, այլ ոչ հայկական մամուլի միջնորդությամբ, ինչպես հաճախ վարվում են մեր պատմաբաններից շատերը:

Եվ ահա անգլիական փաստաթղթերի՝ «Կապույտ գրքի», պաշտոնական այլ վավերագրերի, դեպքայնական զեկուցագրերի, կառավարությունը զխավորած տարրեր կուսակցական պատկանելության գործիչների հայտարարությունների, ասույթների, ակամա խոստովանությունների և Ֆրանց իրական գործելակերպի համադրման ու վերլուծության եղանակով Ա. Կիրակոսյանին հաջողվել է չրի երես հանել Անգլիայի կառավարող շրջանների՝ պահպանողական թե ազատամիտ, փարիսեցիական վարքագիծը Հայկական հարցի սկզբնավորման շրջանից ընդհուպ մինչև XIX դ. վերջը:

Թեև դիրքը սահմանափակված է 1890-ական թվականների ժամանակագրական շրջանակներով, իրականում, սակայն հեղինակը հիմնական գծերով ներկայացնում է Անգլիայի կառավարող շրջանների քաղաքականությունը 1875—1878 թթ. Արևելյան ճգնաժամի տարիներին և Բեռլինի վեհաժողովից սկսած, Ըստ որում, նա առանձին-առանձին վերլուծում է իրար հաջորդած պահպանողական և լիբերալ կուսակցությունների զխավորած կառավարությունների քաղաքականությունը (Դիզրայելի, լորդ Սոլսբերի, Գլադստոն, լորդ Ռոզբերի), ցույց տալով անգլիական դիվանագիտության ըստ էության հետևողական գիծը ուս-թուրքական հարաբերությունները սրելու, լարվածության մեջ պահելու, Ռուսաստանի ու Քուրդիայի դարավոր թշնամանքը երկրի ջահերին հմտորեն ծառայեցնելու նրանց քաղաքականության մեջ՝ բոլոր դեպքերում ի վնաս Հայկական հարցի արդարացի լուծման: Գրքում համոզիչ փաստերով մերկացված է ինչպես Մեծ Բրիտանիայի, այնպես էլ Ռուսաստանի երկրի մի քաղաքականությունը 1894—1896 թթ. Հայկական ջարդերի նախօրյակին և բուն ջարդերի ժամանակ: Ինչ վերաբերում է կոտորածների նախապատրաստությանը, հետաքրքրական են այս առիթով հեղինակի մեջբերած թուրք պետական գործիչ Իսմայիլ Քեմալի այն խոսքերը, թե «հայերը կայսրության միակ ժողովուրդն էին, որոնք ծառայում էին Արդուլ՝ Համիդի համար կործանարար ազատամիտ գաղափարների տարածմանը (էջ 31): Իսկ այդ ազատամիտ գաղափարները կողոպտելու ուղևացնելու նպատակով Արդուլ Համիդը հմտորեն օգտագործում էր քուրդ հետադիմական ափիդին, արյունարբու ցեղապետ-չեխերին: Վերջինս լարվածությունները վկայությամբ, —

զրույց է հեղինակը,—հայ ազգաբնակչության կոտորածները սկսվեցին հենց այն բանից հետո, երբ սուլթան Արղուն Համիդը Կոստանդնուպոլիս հրավիրեց քրդական ցեղերի առաջնորդներին, որոնց դիմավորեցին մեծ պատիվներով» (նույն տեղում)։

Գրքի առավել նկատելի արժանիքներից մեկը Հայկական հարցի քննությունն է միջադաշին հարաբերությունների, մեծ տերությունների քողարկված կամ բացահայտ մրցակցության լայն կտավի վրա, Ցույց է տրվում, թե ինչ գործարքներ էին տեղի ունենում ի հաշիվ հայ ժողովրդի Այսպես, 1894 թ. Սասունի հերոսական ապստամբության և դրան հաջորդած զանգվածային կոտորածներից հետո անգլիական լիբերալ վարչապետ լորդ Ռոզբերին «համաձայն իր», որ ցարական Ռուսաստանը գրավի Արևմտյան Հայաստանը, որի դիմաց ռուսական կառավարությունը պիտի ճնշում գործադրեր Ֆրանսիայի վրա, վերջինիս ստիպելով հրաժարվել նգիպտոսում անգլիական քաղաքականությանը հակադրվելուց։ Մեջբերելով պրոֆեսոր Ֆ. Ռոտշոյնի այս կարծիքը, հեղինակը վերհանում է դիվանագիտական այս խաղերի արդյունքը.

«Ռոզբերին կանգնեց Օսմանյան կայսրության գործերին լմիջամտելու դիրքերին...» (էջ 44)։

Պատմությունից դասեր քաղելու տեսանկյունից լափազանց կարևոր են գրքում բերված մի շարք փաստեր, որոնք վկայում են մեծ տերությունների դիվանագիտական խաղերին ընդառաջելու կործանարար հետևանքներն արևմտահայության համար։ Մասնավորապես այդ է հաստատում «Բանկ Օտոմանի» գրավման պատմությունը, որը, որպես եղելություն, անշուշտ, պետք է հիշատակվի, բայց ոչ փառաբանվի, ինչպես դա արվում է մերօրյա որոշ պարբերական հրատարակություններում և՛ մեզ մոտ, և՛ սփյուռքում։ Վկայույց գրքից մեջբերված փաստը վերին աստիճանի հասկանչական է հայ կուսակցություններում իշխող մտայնության համար։ «Հայերը,—ասել էր Աբդուլ Համիդն անգլիական դեսպանության աշխատակցին,—պարծենում էին, որ անգլիական նավատորմը համալրվել է ևս վեց նավերով, իսկ Ֆրանսիական նավատորմը դուրս է եկել Միջերկրական ծով, վստահ լինելով, որ այդ բոլորը Եվրոպայի անում է հատկապես իրենց օգտին» (էջ 77)։ Այս առիթով Վերլուծաբան Հայաստանը գրքի հեղինակներ Ա. Վիլյամսոն ու Մ. Գարրիելյանը եզրակացնում էին, թե Աբդուլ Համիդը վստահ էր այն բանում, որ եվրոպական տերությունների ռազմական համատեղ ելույթ տեղի չի ունենա, որովհետև Անգլիան և Ռուսաստանը երբեք չեն կարողանա այս հարցում որևէ համաձայնություն հասնել (նույն տեղում)։ Հենց այդ վստահությունն էր արյունաբերու սուլթանին առաջնորդում դեպի նոր ջարդեր, հայասպան նոր արջավանքներ։ Աբդուլ Համիդի՝ Անգլիա-Ռուսաստան հակամարտությունը որպես հաղթանակ օգտագործելու փայլուն եղանակն է, որ չէին յմրռնում կամ բացահայտորեն թերահամարում էին արևմտահայ ազատագրական պայքարի ղեկավար ուժերը, մասնավորապես, դաշնակցության կոմիտեներն իրենց ահաբեկչական գործողություններն իրականացնելիս։ Հեղինակը հիշում է Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպանության աշխատակից Չ. Ռոբերտսի այն դիտողությունը, որ Աբդուլ Համիդը թույլ տվեց «Բանկ Օտոմանի» գրավումը՝ մարդկության աչքին իր կողմից նախատեսված ջարդն արդարացնելու համար, որ Յըլզըզի տերը դրանով ինքն էր հրահրում մայրաքաղաքի մահմեդական ազգաբնակչության հակահայ տրամադրությունները, միաժամանակ ջիոթության մեջ գցելով Եվրոպայի հասարակական կարծիքը, եվ մինչև հուսահատ քայլի դիմած խիզախները գտնվում էին գրավված բանկում, սակայնական կառավարությունը շտապ մայրաքաղաք տեղափոխեց քրդերի և լազերի զինված խմբեր, որոնք էլ հենց մուեռանդ խուժանին միացած ձեռնարկեցին հայկական թաղամասերի բնակչության քստմենելի սպանելը։ Արդյունքը՝ 8—10 հազար նոր անմեղ զոհերն օրում, այս անգամ կայսրության մայրաքաղաքում, բոլոր դեսպանների այքի առջև և 15 հազար հայերի փախուստ արտասահման՝ Բուլղարիա, Եգիպտոս, Հունաստան և Ֆրանսիա (էջ 86—90)։

Հայկական հարցում անզուրուս դիվանագիտության մութ ծալքերը թափանցելուն օգնում է Ա. Կիրակոսյանի մեջբերած լափազանց ուշագրավ և հայ պատմագիտական գրականությանը տակավին անհայտ մի աղբյուր՝ բրիտանական վարչապետ լորդ Սուլբերիի հանդիպումն ու զրույցները ռուսական ցար Նիկոլայ II-ի հետ Բալմորալում, 1896 թ. սեպտեմբերին՝ վերջինիս Անգլիա կատարած այցի օրերին։ Այս փաստաթուղթը հրապարակել է խորհրդային պատմաբան Ն. Բուխովիտինովը 1973-ին, սակայն Ա. Կիրակոսյանը չի բավարարվել եղածով և օգտագործել է նաև ավելի վաղ՝ 1960-ին «Մլավոնի» ընդ իսթ Ցուրբոփենն ղիվյու» ամսագրում զետեղված Մ. Ջեֆերսոնի հրապարակումը՝ «Լորդ Սուլբերիի զրույցները ցարի հետ՝ Բալմորալում, 1896 թ. սեպտեմբերի 27-ին և 29-ին» վերնագրով։ «Լորդ Սուլբերիի 64 տարի հետո հրապարակված գրառումների տեքստը,—նշում է հեղինակը,—մերկացնում է

բրիտանական քաղաքագետների երկերեսանիությունն ու կեղծավորությունը, որոնք չէին խորշում ամեն անգամ Հայկական հարցն օգտագործել որպես մանր դրամ՝ իրենց իմպերիալիստական քաղաքականության մեջ» (էջ 92—93)։ Ընթերցողին հղելով գրախոսվող գրքի համապատասխան էջերը (92—99), որոնք, ինչպես և գիրքն ամբողջությամբ, կարդացվում են շթուլացող հետաքրքրությամբ, բերենք հեղինակի եզրակացությունները. «Այսպիսով, կառավարության ղեկավարները... վճռականորեն պաշտպանում էին Օսմանյան կայսրության ամբողջականությունը, իրենց որոշումը փաստարկելով հնարավոր պատերազմի վտանգով... Բալմոռսլււմ Սուլթանին առաջարկում էր տերությունների բայլերն ուղղել ոչ թե Օսմանյան կայսրության ամբողջականության, այլ սուլթանի դեմ։ Իր հերթին Նիկոլայ I-ը խոստովանել էր, որ ներկա սուլթանի գահազրկումը պետք է անհրաժեշտ միջոց դառնա կայսրության վիճակը բարելավելու համար» (էջ 93)։ «Անգլիայի ու Ռուսաստանի փոխադարձ մրցակցությունը,— կարգում ենք այնուհետև,— կազմում էր Մերձավոր արևելքում միջազգային հարաբերությունների հիմքը, և այդ մրցակցությունն Օսմանյան կայսրության ամբողջականության ամենաշավաստի գրավականն էր, որն էլ, իր հերթին, չէր բացառում հայ ազգաբնակչության արուեսնալի կոտորածներն ապագայում... Նրկու մեծ տերությունների կառավարողները,— եզրափակում է հեղինակը,— հոգ էին տանում սոսկ իրենց ջահամու նպատակների մասին։ Նրանց թիչ ևր մտահոգում սուլթանական լծի տակ հեծող հայ ժողովրդի ճակատագիրը» (էջ 98—99)։

Արդեն նշվեց, որ հեղինակը վերհանել է Հայկական հարցում անգլիական երկու գլխավոր կռակցությունների՝ պահպանողականների ու լիբերալների որոնքարած արտաքին քաղաքական գծի ողջ վնասակարությունն արևմտահայության ճակատագրի համար։ Սակայն Ա. Կիրակոսյանը չի բավարարվում դրանով, այլ քննության է առնում նաև այդ կռակցությունների ներսում հարցի շուրջ եղած այն տարաձայնությունները, որոնք իրենց կնիքն էին դնում կառավարության քաղաքականության վրա։ Այսպես, եթե լիբերալ կռակցության ճանաչված պարզալուխ Գլադստոնը կարծում էր, որ Անգլիան մյուս մեծ տերությունների համաձայնությամբ չպետք է միջամտի՝ ջարդերը դադարեցնելու նպատակով, ապա լիբերալների մյուս ղեկավարը՝ լորդ Ռոզբերին, հայտարարում էր, որ ինքը ամենավճռական ձևով հանդես կգանջատ միջամտության քաղաքականության դեմ։ Ավելին. նա չէր խորշել ավելացնել, որ «հայ ժողովրդի կործանումը Մեծ Բրիտանիայի հոգսերի լոկ մեկ հազարերորդ մասն է կազմում և ամենք իրավունք չունենք մնացած 999-ը զոհաբերելու այդ մեկ մասին, եթե նույնիսկ գա պահանջում է անհապաղ դիմել գործողությունների» (էջ 99)։

Փաստական հարուստ նյութ է պարունակում մենագրության երրորդ գլուխը, ուր հեղինակը քննական վերլուծության է ենթարկում Անգլիայի հասարակական կարծիքը Հայկական հարցի նկատմամբ ընդհանրապես և 1894—1896 թթ. իրադարձությունների՝ մասնավորապես Ա. Կիրակոսյանը հատուկ քննում է կառավարող շրջանների քաղաքականության և հասարակական կարծիքի փոխադարձ կապը, արդիական հնչողությամբ մի հարց, որը, թերևս, նա է առաջինը հանգամանորեն հետազոտում։ Հիրավի, այսօր էլ հայ իրականության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ ու մտտեցումներ՝ հասարակական կարծիքի գնահատման հարցում։ Առկա է հասարակայնության ձայնի գերազնահատում և թերազնահատում։ Գերազնահատել, անշուշտ, պետք է, քանի որ հասարակական կարծիքի ձևավորման գործում կառավարող շրջաններն անմասն չեն մնում։ Սակայն թերազնահատելն էլ վտանգավոր է։ Փորձենք բացատրել մեր միտքը Սումգայիթի օրինակով։ Եթե մեր երկրում գոյություն ունենար ձևավորված ու արդար հասարակական կարծիք, որն իր հուժկու բողոքի ձայնը բարձրացնելու այդ եղևնագործության դեմ, ապա ջատ հավանական է, որ երկրի ղեկավարությունը միջոցներ ձեռնարկեր կատարված ոճրի պատասխանատուներին խոստագույնս պատժելու համար։ Մինչդեռ բողոքի ալիքը լրարձրացավ, որովհետև մամուլը և լրատվության այլ միջոցներն ազատ չէին, մասնավանդ 1908 թ.։ Եվ արդար բողոքի ձայններն ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մի քանի այլ հանրապետություններում խլացվեցին կատարված մոռացության տալու իշխող մթնոլորտում, որն ի վերջո հանգեցրեց երկրով մեկ նոր բռնությունների ու հայասպան նոր ակտերի՝ Բաքվում, Արցախում և այլուր։

Գալով գրախոսվող գրքին, նշենք, որ հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ թթեն անգլիական հասարակայնությունը հիմնականում պաշտպանում էր իր կառավարությանը, լիենելով նրա քաղաքականության ջատագույնը, սակայն այս հասարակայնության որոշակի մասը հանդես էր գալիս Հայկական հարցում անգլիական կառավարությունների նյութած խորամանկ մեքենայությունների ռատապարտումով» (էջ 161)։ Մեծ Բրիտանիայի կառավարությունը Հայ-

կական հարցի շուրջ բարձրացրած աղմուկի օգնությամբ ձգտում էր սոսկ իր ազդեցությանը ենթարկել հսկայական սուլթանական կայսրությունը, և գրակացնում է հեղինակը:

Ա. Կիրակոսյանի գիրքը շահեկան է նաև իր գիտական ապարատով՝ ընդարձակ մատենագիտական ցանկով և հանգամանալից ծանոթագրություններով՝ գրքում հիշատակված պետական, քաղաքական, դիվանագիտական ու հասարակական բազմաթիվ գործիչների վերաբերյալ: Տրված է նաև անգլերեն համառոտ ամփոփում, ինչպես և անվանացանկ:

Գրախոսվող գիրքը, ինչպես ամեն մի ուսումնասիրություն, գերծ շէ թերություններից: Այսպես, մեր կարծիքով, ճիշտ չէ ասել, թե իբր օՏրանսիայի կառավարությունն իր արտաքին քաղաքականության մեջ ամեն ինչում հետևում էր Ռուսաստանին (էջ 55) կամ հավատալ լորդ Սուրբերին հասցեագրված Վիկտորյա թագուհու նամակի անկեղծությանը, ուր նա բզայրույթով գրում էր նեղուցները գրավելու անհրաժեշտության մասին՝ հայ ազգաբնակչության նոր շարդերը կանխելու համար (էջ 69—79): Կարելի է վիճարկել, թե արդյո՞ք հարկ կար զգալի տեղ հատկացնել Հայկական հարցում բոլոր մեծ տերությունների քաղաքականության քննությանը (էջ 112—153), թեև կատարված մեծ աշխատանքը, անշուշտ, օգտակար է և նպաստում է հարցի մասին համակողմանի պատկերացում կազմելուն: Հայկական հարցի նկատմամբ անգլիական հասարակական կարծիքի գնահատականը, անկասկած, առավել ամբողջական կդառնար, եթե հեղինակը հնարավորություն ունենար ամսագրերից բացի, օգտագործել անգլերեն թերթերը:

Այս և մի քանի այլ ոչ սկզբունքային թերությունները չեն որոշիչը, այլ այն, որ հեղինակը մասնաղետների ու ընթերցող լայն շրջանների սեղանին է դրել վերին աստիճանի տշագրավ մի գործ, որը նոր որակ է հարցին նվիրված ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան պատմաբանների աշխատությունների շարքում: Անհրաժեշտ է գրթի հայերեն թարգմանությունը՝ հայ ընթերցողին ևս Հայկական հարցի անաչառ, ճշմարտացի գրված պատմության մի էջին հաղորդակից դարձնելու համար:

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմական գիտությունների թվագոր